Հաստատում եմ՝

Տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Հովհաննիսյան _____

/ստորագրություն/

«07» 09 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ « Բայանդուրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

ԴԱՍԱՐԱՆ՝ IV

ԴԱՍՂԵԿ՝ Հ. Հովսեփյան

Ուս. /շ	Ուսումնադաստիրակչական աշխատանքի բովանդակությունը	Կատարող
I	Ծանոթացնել COVID 19համավարակին և պաշտպանվելու կանոններին: Անցկացնել դասարանական ժողով, ընտրել ավագ, հերթապահություն	Դասղեկ
II	Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները: Անցկացնել ծնողական ժողով , ընտրել ծնողական խորհրդի կազմը:	Դասղեկ
III	ՀՀ անկախության 31-րդ ամյակին նվիրված զրույց: Երգել,ասմունքել և պարել տոնին համապատասխա: Յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթը անցկացնել աշակերտական ժողով:	Դասղեկ
IV	,,Երաժտության օր,, ունկնդրել տարբեր երաժշտություններ:	Դասղեկ
V	,,ՈՒսուցչի օր,,զրույց դպրոցի նշանակության,ուսուցչի ազգանվեր առաքելության մասին,երգել ուսուցչին նվիրված երգեր: Գրել շարադրություն <<Իմ սիրելի ուսուցիչը>> թեմայով	Դասղեկ
VI	Շրջակա միջավայրի պահպանություն:	Դասղեկ
VII	Դասարանական կանոնների կազմում, սենյակային ծաղիկների մշակում:	Դասղեկ
VIII	Երեխաների կյանքի,զգացմունքների,առօրյա յի,շրջապատի վերաբերյալ ստեղծագործությունների ընթերցում:	Դասղեկ
IX	Զրույց բնության գրկում ճիշտ հանգստանալու,արևից և քամուց պաշտպանվելու մասին <<Արևարյուքներ և դրանցից պաշտպանվելը>>:	Դասղեկ
X	Ծանոթանալ ընկերների երազանքներին, ձգտումներին: Օգնել <<Ինչ եմ ուզում դառնալ>>թ-ով	Դասղեկ
XI	,,Ոսկեհեր աշուն,,թեմայի շրջանակներում անցկացնել զրույց, <<Ես աշունն եմ սիրում>>:	Դասղեկ
XII	Զրույց երկրաշարժի, դրանից պաշտպանվելու մասին <<Ինչպես պաշտպանվել երկրաշարճի ժամանակ>>:	Դասղեկ
XIII	Զրույց ճանապարհային ճիշտ երթևեկելու մասին	Դասղեկ

	երթևեկության կանոնները>>: Ծնողական ժողով	
XIV	Զրույց Ամանորի պատմության,տոնակատարության,եղևնու՝ որպես տոնածառ դառնալու պատմության մասին	Դասղեկ
XV	,,Իմ համայնքը,,թեմայով անցկացնել զրույց: Բացատրել ,,համայնք,, հասկացությունը, մեր համայնքի պատմություն	Դասղեկ
XVI	Զրույց Հայոց գրերը, Մ. Մաշտոցի կենսագրությունը,կատարած աշխատանքները. <<Հայ գրերի ստեղծողը>>	Դասղեկ
XVII	Զրույց ձմռանը սառնամանիքից պաշտպանվելու մասին:	Դասղեկ
XVIII	,,Ես ,,-ի մասին զրույցներ , ինքնաճանաչման ,ինքնադրսևորման Զարգացում <<Ով եմ ես>>	Դասղեկ
XIX	Հովի .Թումանյանը ամենայն հայոց բանաստեղծ, մեծ մանկագիր հեքիաթագիր: Գրիք նվիրելու օր: Մայրենի լեզվի միջազգային օր:	Դասղեկ
XX	Ինչպես պաշտպանվել վարակիչ հիվանդություններից <<Համաճարակներն դրանցից պաշտպանվելու կանոնները>>:	Դասղեկ
XXI	Զրույց մարդու կենսական օրգանների մասին: Դրանց պաշտպանումն ու Խնամքը, Հիգենի: Ծնողական ժողով:	Դասղեկ
XXII	Զրույց <<Ինչպես շնորհավորեցի մայրիկիս Մարտի 8-ը>>: Բացիկների պատրաստում՝ ընտանիքի անդամներին շնորհավորելու համար:	Դասղեկ
XXIII	Զրույց <<Ինչ հոգևոր տոներ գիտեք>>թ-ով	Դասղեկ
XXIV	Զրույց շրջապատում ճիշտ դրսևորվելու, հարգալից վերաբերմունք ունենալու,դիմացինի հետ հաղորդակցվելու մասին <<Վարվելակերպի կանոները>>	Դասղեկ
XXV	,,Կենդանիները մեր բարեկամներն են,,	Դասղեկ
XXVI	Բնության փոփոխությունների դիտարկում ,,Գարունն արթնացել է ,,	Դասղեկ
XXVII	Առողջության պահպանման կարևորությունը, ֆիզիկական կախվածություն, ճիշտ սնունդ <<Վատ սովորություններ, որոնք պետք է հաղթահարվեն>>	Դասղեկ
XXVIII	Տարածքի մաքրությունը, բնության	Դասղեկ

	խնայողաբար օգտագործումը կարևորելու նպատակով անցկացնել զրույց << Երկրագունդը իմ տունն է>>թ-ով	
XXIX	Համակարգիչն օգնում՝ թե վնասում է: Բացատրել համակարգչի լավ ու վատ կողմերը<<Ինչպես օգտվել համակարգիչից>>	Դասղեկ
XXX	,,Իմ տեղն ընտանիքում,, շարադրության միջոցով ամրապնդել ընտանիքը սիրելու զգացմունքը <<Իմ ընտանիքը և ես>>	Դասղեկ
XXXI	,,Հայաստանը մեր հայրենիքն է ,, թեմայի մասին զրույցներ, երգերի Կատարում <<Հայաստանը ես եմ>>	Դասղեկ
XXXII	Զրույց հեքիաթների, դրանց ստեղծման, բարի և չար հերոսների, նրանց արարքների մասին <<Եթե ես հրաշագործ լինեի>>թ-ով	Դասղեկ
XXXIII	Ձեռք բերած գիտելիքների, որակների ամրապնդում,կատարած աշխատանքների քննարկում	Դասղեկ
XXXIV	Առջևում ամառ է, ամառվա ընթացքում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ հանձնարարականներ, առաջարկություններ: Ծնողական ժողով:	Դասղեկ

Կրթական դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

Չորրորդ դասարանը բաղկացած է տասնմեկ աշակերտներից՝ 6 տղաներ են,

5՝ աղջիկ: Որոնցից մեկը կապկու: Այն մի կոլեկտիվ է, որում կան բնավորության և ընդունակությունների տարբեր դրսևորումներով օժտված երեխաներ: Ընդանուր առմամբ կոլեկտիվը հաշտ է, սակայն պահանջվում է մեծ աշխատանք՝ դաստիարակության , կարգապահության, ուսման որակը բարձրացնելու ուղղությամբ:

2. Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատա նքները՝

ՈՒսուցման գործընթացն իր մեջ ներառում է նաև դաստիարակչական ֆունկցիա: Հետևողականորեն աշխատանք տանել աշակերտների աշխարհայացքի,բարոյական, աշխատանքային, գեղագիտական, էթիկական պատկերացումների ճիշտ զարգացման ուղղությամբ: ՈՒսուցումն առանց դրական որակների մշակման, անձի մեջ չի կարող

ունենալ արդյունավետության ցանկալի չափեր, ուստի պետք է ուսուցչի ,սովորողների հետ հաղորդակցման հատուկ միջոցներ՝ զրույցներ, դրական կերպարների օրինակներ, սովորողի իրավունքների և պարտականությունների ծանոթացում:

Ակտիվորեն մասնակից դարձնել դպրոցի ներքին ծրագրերին: Ամուր հիմքի վրա դնել աշակերտ-դպրոց-ընտանիք կապը:

3. Հայեցի դաստիարակություն

3.1 – Հոգևոր դաստիարակություն

Զրույցների և պատմական փաստերի միջոցով ծանոթացնել Հայաստանի քրիստոնեության ընդունմանը: Կարևորել այդ փաստը հայոց պահպանության գործում: Հայ ականավոր գործիչների կերպարների օգնությամբ երեխաների մեջ խորացնել հայ քրիստոնյա քաղաքացու ձևավորումը: Ծանոթացնել ազգային ավանդույթներին և տոներին: Աշակերտների մեջ սերմանել գթասրտություն, սեր, համբերություն, հավատարմություն ու հանդուժողականություն:

3.2 - Գեղագիտական դաստիարակություն

Ձևավորել մշակույթ կրող, ստեղծագործող անձ: Խթանել աշակերտներին ճանաչելու իրենց հակումներն ու հետաքրքրությունները արվեստի նկատմամբ:

Օգնել ռեժիմ կազմել գերծանրաբեռնվածությունից խուսափելու համար , ինչ գրականություն կարդալ՝ ըստ ընտրած արվեստի ճյուղի: Աշակերտների օգնությամբ ձևավորել գեղեցիկ վահանակներ, արթնացնել սեր գեղեցիկի նկատմանբ:

3.3- Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Հայրենասիրությունը հայրենիքի նկատմամբ սերն է: Այն ձևավորելուն կնպաստեն արիության դասերը, որոնք կնվիրվեն պատերազմների , աշխատանքի , տիեզերքի հերոսների, նրանց կատարած գործերին: Հարգանքով և հպարտությամբ լցնել աշակերտների սրտերը հայոց պետականության, բանակի, խորհրդանիշների, տոների, ազգային հերոսների հանդեպ: Բացատրել հայրենիքի, բանակի մեծ դերը ազգի պահպանության գործում:Անդրադարձ 44օրյա պատերազմին:

3.4- Ֆիզիկական դաստիարակություն

Դպրոցականների ֆիզիկական դաստիրակության հիմնական միջոցներից են ֆիզիկական վարժությունները, բնական ու հիգենիկ գործոնները: Անհրաժեշտ է հասու դարձնել դպրոցականին հատուկ կազմակերպված ու գիտակցաբար կատարվող շարժական վարժությունների կարևորությունը: Ծանոթացնել սպորտի մեծ վարպետների կյանքին և գործունեությանը:

3.5 - Աշխատանքային դաստիարակություն

Աշխատանքային դաստիարակության հիմքում դնել հանրությանը օգտակար լինելու գաղափարը, մտավոր և ֆիզիկական ուժի միացումից ինտելեկտուալ

պոտենցիալի զարգացում, որակյալ աշխատանք կատարելու ձգտման ձևավորում:

3.6 - Բնապահպանական դաստիարակություն

Էքսկուրսիաների միջոցով ամրապնդել բնության պահպանման անհրաժեշտությունը մարդու կյանքում, ավելի մոտիկից ծանոթանալ բնության, բույսերի ,

Բնահպանական խնդիրները դարձնել ամենօրյա խնդիր:

3.9 - Դպրոց-ընտանիք կապը

Յուրաքանչյուր աշակերտի ծնողի հետ ծանոթանալ, իմանալ յուրաքանչյուր անհատականության մասին: Բացի ծնողական ժողովներից հանդիպել ծնողների հետ՝ աշակերտի մոտ նկատված անհաջողությանների, անկարգապահության շտկման նպատակով: Ապահովել ծնող-աշակերտ –ուսուցիչ կապը: